

ՊԱՅՄԱՆՔ

ՊՈՒԼԿԱՐԻՍ

Տարեկան 12 ծր.

Վեցամսեայ 6 ծր.

ԱՐՏԱՍԱՀԱՆԱՆ

Երկու քիւր մէկ ծրարով

Տարեկան ... 14 ծր.

Վեցամսեայ ... 7 ծր.

ԱՍԵՐԻԿԱ

Տարեկան 2.60 Տօրար

Վեցամսեայ 1.50 »

Կ Ա Ն Խ Ի Կ

Թանուցման փոքր
20 սանթիմ



Լ Ր Ա Գ Ի Ր

Ա Ձ Գ Ա Յ Ի Ն Ե Ի Ք Ա Ղ Ա Ք Ա Կ Ա Ն

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ԱՄԵՆ ԶՈՐԻՔՇԱՐԹԻ ԵՒ ՇԱՐԱԹ

ՀԱՍՏԵ

Rédaction du journal

„Irayounk“

VARNA (Bulgarie)

Редакция

на ВѢСТНИКЪ

Иравуникъ

ВАРНА

Գրութաւորներ ևս չեն տրուիր

ԴԺԳՈՂՆԵՐԸ

Ռուսական քաղաքէ մը մեր մէկ բարեկամը անցեալ օր մեզ կը գրէր .

«Ձեր թերթին երբեմն 1—2 օր ուշ հասնելուն պատճառաւ, բաժանորդներէ աշինչը և այսօրինչը դժգոհութիւն կը յայտնեն »

Այդ դժգոհութիւն յայտնող «աշինչները» այն մարդիկն են որոնք թերացած են ցարդ վեճարեւել իրենց բաժնեդիրը ամբողջ ներկայ տարւոյ որուն տասներորդ ամիսը կը լրանայ և այդպիսիներ են որ տարին քանի մը անգամ, հակառակ մեր կամքին, թերթը 1—2 օր միայն ուշ տաճանալին արդարացուցիչ պատճառ ցոյց կուտան իրենց բաժնեդիրը ամբողջ տարի մը ուշացնելու և երբեմն ալ չվճարելու . մինչդեռ խմբագրութիւնն տարւոյ մը ընթացքին մէջ իւրաքանչիւր բաժանորդի միայն բոսթի ծախք հինգ ֆր. կը վճարէ :

Մենք չենք մեղադրեր իրենց իրաւունքին համար խստապահանջ եղողները, այլ ընդհակառակը կը գովենք, եթէ անոնք իրենց պարտականութեանց մէջ ալ կիսով չափ պարտաճանաչ ըլլան դոնէ դէպի աղբային թերթ մը «ԻՐԱԳՈՂՆԵՐ» ի նման, որ տասը տարուան կեանք մը ապրած է իր բաժանորդներէն ստացած բաժնեդիրներովը միայն, առանց կուսակցութիւններու կամ դասակարգի մը փողհաւը ըլլալու և անոնցմէ օգնութիւն ու նպաստ ակնկալելու, ինչպէս ուրիշ շատ մը թերթեր :

Առանց կուսակցական նկատմանքու օգգին իրական վիճակը պատկերացնող և զոտ ազգային գոյն ունեցող «ԻՐԱԳՈՂՆԵՐ» ի գոյութեան պահպանումը միմիայն իր բաժնեդիրներու կանոնաւոր վճարումէն կախեալ ըլլալով, խմբագրութիւնն իրաւունք ունի պա-

հանջելու իր բոլոր ընթերցողներէն ու բաժանորդներէն որ անթերի կերպով հատուցանեն իրենց պարտքը այն թերթին որ իրեն ոչ-կուսակցական հանգամանքովը շատ տեղեր կուսակցամտնեւոր հալածանքին ալ ենթարկուած է և լքուած այն դասակարգէն որ ոսկեղծեալ դեղահատներ կը լլեկ կը սիրէ, ինչ որ «Իրաւունք» չէ զիջած ու չպիտի զիջանի իր ընթերցողներուն հրամանել :

«ԻՐԱԳՈՂՆԵՐ» իր այս զուտ և անխարդախ աղագային ուղղութեան մէջ պիտի շարունակէ իր գոյութիւնը, եւ մենք զայն աւելի հետաքրքրական ու ճոխ բնույթի համար, մտադիր ենք յառաջիկայ յունվար 1 էն սկսեալ անոր ծաւալը մեծցնել, եթէ փութան մեր բաժանորդները իրենց պարտքերը ժամանակին վճարել և հաճին մեր ուղղութեան համակիրները իրենց աջակցութիւնը յսկայել մեր ուսերուն ծանրացող բեռը մի քիչ թեթեւցնելու համար :

Խմբագրութիւն

ՁԱՐԻՆ ՄԱՆԻՔԵՍԸ

Բեդերսպուրկ 18 հոկտ. 1905
Ահա կայսեր մանիֆէստին օրինակը .

Մենք Նիքոլա Բ. Կայսր և ինքնակալ Ռուսաստանի ևն, կը հաղորդենք մեր հաւատարիմ հպատակներուն թէ ամբողջ Ռուսաստանի մէջ եղած խռովութիւնները լսելով, մեր սիրտը խորին ցաւօք լեցուեցաւ, Ռուսիոյ կայսեր երջանկութիւնը կապուած է իր ժողովուրդին բաղդին, նոյնպէս ալ ժողովուրդին դժբաղդութիւնը իր դժբաղդութիւնն է : Այս խռովութիւնները կրնան ամբողջ ազգին կեանքը փտանգել և կրսպառնան մեր կայսրութեան ամբողջութեանը : Մեծ երդումը՝ զոր ըրած ենք կայսերական Գա-

հը մեր բարձրացած ժամանակ, մեր վրայ պարտք կը դնէ որ մեր ամբողջ կարողութեամբ և կամքով վերջացնենք, կարելի եղածին չափ շուտ, այս խռովութիւնները որոնք այնչափ վտանգաւոր են կայսրութեան :

Կառավարութեան հրամայած ենք որ հարկ եղած միջոցները ձեռք առնէ այս անկարգութեանց առաջը առնելու համար, և պաշտպանուին այն անձերը որոնք խաղաղէն իրենց պաշտօնը կը կատարեն : Մենք անյետաձգելի կը գտնենք բարձրագոյն իշխանութեան բարենորոգումները որոնք հետեւեալ կետերը կը պարունակեն և պիտի ծառայեն հանրային բարօրութեան :

Մենք կը հրամայենք կառավարութեան որ մեր անփոփոխ կամքը կատարէ :

Ա. Ժողովրդեան հաստատ հիման վրայ ազատութիւն տայ անձի, խօսքի, համախմբումներու և ընկերութիւններ կազմելու :

Բ. Թոյլատրէ որ Տոււայի ընտրութեանց մինչեւ վերջնական արդիւնքը, ըստ կարելոյն մասնակցին ժողովրդեան այն դասակարգերը որոնք զըրկուած էին այս անգամուան ընտրութեանց մասնակցելու իրաւունքէն : Նոյնպէս միջոցներ ձեռք առնել որ յառաջիկային ընտրութիւնը ընդհանուրի մասնակցութեամբ ըլլայ :

Գ. Հիմնական սկզբունք ընդունուի որ Տոււայի հաւանութեան չենթարկուած ոչ մէկ օրէնք գործադրութեան դրուի, և ապահովութիւն տրուի Տոււայի անդամներուն որ իրաւունք ունենան այդ օրէնքներու գործադրութեանը հսկելու :

Մենք ամբողջ Ռուսաստանի ժողովուրդը կը հրաւիրենք դէպի հայրենիք ունեցած իրենց պարտականութեանց կատարման, որով կարելի ըլլայ անհետացնել այս խռովութիւնները, մեզի հետ միասին իրենց ամբողջ ուժը գործածեն որ կարող ըլլանք ընդ-

հանուր խաղաղութիւնը վերահաստատել մեր հայրենիքի մէջ :

ԲԱՂԱՔԱԿԱՆ

Սահմանադրական պետութեանց մէջ ամենէ աւելի աղմկայոյց երկիրը Աւստրո-Հունգարիան է : Այս երկրեակ պետութեան մէջ ներքին ցեղային կռիւն երկար տարիներէ ի վեր կը շարունակուի օր քան զօր աւելի սուր կերպարանքներ ստանալով : Այդ ընդարձակ կայսրութեան մէջ ապրող զանազան ցեղերը իրարու կապող միայն ծերունազարդ Ֆրանց-Յօզէֆ կայսեր անձն է, որուն անհետացման համար երկար տարիներ պէտք չեն . և երկիրը որ կը տիրէ այդ երկրի ոչ-գերման ցեղերու մէջ, այն է որ Ֆրանց-Յօզէֆ կայսեր մահուան յաջորդ օրը մի գոցէ գերմանական կայսրութեան կցուի Աւստրիան, որ արդէն գերմանացեղ իրենց հայրենակիցները գերակշիւ գիրք մը ունեցած ըլլալով, համագերման գաղափարին կը ծառայեն :

Այս փոսնող կանխատեսող Հունգարացիները և գլխաւորապէս երկրին սլաւ ցեղերը երկար տարիներէ ի վեր ամէն ճիգ կը թափեն Աւստրիոյ մէջ գերմանական գերակշռութիւնը պակսեցնելու :

Վերջէւ Բ. Կայսրութեան Պալլի ծովէն մինչեւ Ատրիական ծով տարածելու այդ հաւանականութիւնը ուրիշ պատճառներէ ալ վրտանդ կը նկատուի եւրոպական հաւասարակշռութեան և խաղաղութեան տեսակէտով, ուստի Աւստրիոյ ներքին խռովութիւնները համայն եւրոպիոյ համար ալ ուշադրաւ են :

Միայն ինչորէ գիտնալ թէ Ֆրանց Յօզէֆի մահէն յետոյ իրօք պիտի կատարուի՞ քաղաքական այն մեծ փոփոխութիւնը որուն մասին Աւստրիոյ եւ Գերմանիոյ մէջ համարձակօրէն կը խօսուի և որ ամբողջ սլաւական աշխարհը վերի վար կրնայ շփել :

Աւստրո-Հունգարիոյ ամբողջ բնակչութիւնը 1900 ի մարդահամարով հաշուուած է 45 ու կէս միլիոն . աւստր մէկ չորրորդը միայն գերման է : այսինքն 11 ու կէս միլիոնը, որուն կէսը բնակիչով Պօնտիոյ, Մօրաւիոյ, Սիլիզիոյ, Թրոլի, Կալիցիոյ եւ Հունգարիոյ մէջ, աննշան փոքրամասնութիւն մը կը կազմեն և

օրէ օր նուազելու. վրայ են, ձուլ-
ուելով Ձէխերու, Լեհերու, Հունգա-
րացիներու եւ իտալացիներու մէջ ։
Պէտք է ըսել թէ գերմանները ա-
մէն ազգէ աւելի ազգափոխութեան
հակամէտ են . այս ճշմարտութիւն
մըն է որ անվիճելիօրէն կը հաս-
տատուի Աւստրո-Հունգարիոյ 1890 ի
վիճակագրոյցը 1900 ի վիճակագրոյցին
հետ թաղաքատեղով. օրինակ, 1890 ին
Հունգարիոյ մէջ իւրաքանչիւր վեց
հունգարացի մէկ գերման կը գտնու-
նուէր, իսկ 1900 ին ութը հուն-
գարացի մէկ գերման գտնուեցաւ ։
Հետեւաբար տարիներու ընթացքին
Աւստրո-Հունգարիոյ այլեւայլ նա-
հանքներուն մէջ ցրուեալ ապրող
գերմանները ձուլուելու կամ ան-
հետանալու դատապարտուած են ։

Իսկ աւստրիացի գերմաններու
միւս կէտը որ վերին եւ Ստորին
Աւստրիա, Սալզպուրկ, Սթերիա եւ
Բարանիթիա կապրին առանձինն, ա-
ճելու վրայ են . բայց 35-40 միլիոն
գերմանատեաց ժողովուրդն մէջ 6
միլիոն գերմաններէ բնակուած քա-
նի մը նահանգները մեծ հաւանա-
կանութիւն կայ որ օրէ օր ողողուն
ոչ-գերման ցեղերէ, ինչպէս վիէննան
որ զուտ գերմանացեղ քաղաք մըն
էր քանի մը տասնեակ տարիներ
առաջ, այսօր Ձէխերով լեցուած է .
եւ ասոնք ինչպէս ուրիշ սլաւ
ցեղեր կը սպառնան օր ըստ օրէ
տիրել մայրաքաղաքին ամէն կեր-
պերով ։ Հետեւապէս ցեղի եւ բազ-
մութեան տեսակէտով Աւստրիան
բոլորովին գերմանացեղու ջանքերը
սպարդիւն մնալու դատապարտուած
ըլլալ կը կարծուի ։

Իսկ Տիրանց-Եօզէֆ կայսեր մահէն
յետոյ եթէ Գերմանիա յանգում-
թիւն ունենայ գերմանացեղ փոք-
րամասնութեան հրաւերին վրայ գին-
ւորական ուժով Աւստրիան գրաւել
կամ միացնել ելլելու, ոչ թէ միայն
35-40 միլիոն ոչ-գերման բնակչու-
թեան յուսահատ ընդդիմութեանը
կը բախդի, այլ նաեւ բոլոր սլաւ
պետութեանց դէմ կուի յայտա-
բարած կըլլայ, եւ հաւանականա-
բար, Եւրոպայի հաւասարակշռութիւնը
պահպանելու համար, ուրիշ պետու-
թիւններ ալ Գերմանիան սանձելու կը
փութան ։

Այդ ամենէն զատ, պէտք չէ ան-
տեսել Հապսպուրկեան դահին օրի-
նաւոր զահաժառանգը, արհիդուքս
Ֆրանսուա-Ֆերդինանտը ։ Այս Հա-
պսպուրկը կարող է իր ազդեցու-
թեանը, մտացիութեանը եւ գինւորա-
կան կարգապահութեան շնորհիւ ժա-
մանակին հասնել եւ պահպանել իր
ժառանգութեան ամբողջութիւնը, եւ
արդէն նա մէկէ աւելի անվիճելիօրէն
մէջ ցոյց տուաւ իր բաղձանքը համա-
գերմանութեան դէմ կոտելու, եւ
անոր պիտի օգնեն անշուշտ ինչպէս
կայսրութեան ոչ-գերման մեծամաս-
նութիւնը, նոյնպէս ալ զուրօքն
այն ամենը որ արդարութեան եւ
խաղաղութեան բարեկամները են,
եւ մասաւանդ այն պետութիւնները
որոնք Գերմանիոյ օգուտը իրենց վը-
նաս կը համարեն ։

Հետեւաբար սխալ կը գտնենք
այն կարծիքը թէ Աւստրո-Հունգա-
րիան Տիրանց-Եօզէֆ կայսեր մահէն
յետոյ գերմանական նահանգի վերա-
ծուի կամ Գերմանիոյ հետ միանայ ։

ԿՈՎԿԱՍԻ ԴԵՊՔԵՐԸ

—[o]—

ԵՐԵՎԱՆԻ ՄԱՍԻՈՒՆԻ ԴԱՆՈՒՄ

Երեւանի վերջին դէպքը թալանդ էն

ԵՐԵՎԱՆ, 1 հոկտ. — Թաթարներու
եւ Հայոց միջեւ կռիւը հոս այսօր ըս-
կաւ ։ Չօքը աղղեցիկ վարուեցաւ,
եւ ընդհանուր կառավարիչը օտար
պարտեցաւ քաղաքը ։ Ամէնը հանդար-
տեցաւ մէկ ժամէն ։ Ընդհանուր ձեռ-
նուած մեծ է ։

ԵՐԵՎԱՆ, 2 հոկտ. — Խոտմուծիւնը
սկսած էր Հայոց կողմանէ Թաթարնե-
րու վրայ եղած հրացանաձգութեան հե-
տեւանք, քաղաքին մօտ պարտէզի
մը մէջ ։ Տրակոն գինուորները հայե-
րը ձերբակալեցին եւ քաղաք բերին,
ուր անոնք չորհրդակցութեան թա-
թարներու եւ Հայերու բազմութե-
նէ մը ։ Տրակոնները ամբողջ ցը-
րուեցին, — որ յետոյ նորէն հաւա-
քուեցաւ, եւ կրակը սկսաւ ։ Ութ
Թաթարներ եւ երկու Հայեր սպանու-
եցան . երեք թաթար ու ութ հայեր
վերաւարուեցան ։

Չանկէզուր գաւառի դէպքերը էն-
քաւիծալ են

ԲԵՆԵՐՍՊՈՒՐԿ, 7 հոկտ. — Չանկէ-
զուրի գաւառին մէջ սպա նութիւնե-
րը կը շարունակուին հայերուն եւ Թա-
թարներուն միջեւ ։ Հայերը Թաթա-
րական դիւղ մը այրած են, եւ կա-
ռավարութիւնը ստիպուեցաւ իրազե-
անք զրգիւ կարգը վերահաստատելու
համար ։

ԼՕՆՏՕՆ, 10 հոկտ. — Իրիկուան թիւ-
թերը հետեւեալ հետագիւրը կը հրա-
տարակեն .

«Կովկասէն հասնող վերջին անդե-
կութեանց նայելով, կրակի օր Թա-
թարները յարձակեցան Հոնդալարի վը-
րայ . Հայերը զանոնք ետ մղեցին,
եւ յարձակողները քաշուիլ ստիպուե-
ցան 97 մեռել ձգելով գետին վրայ ։»

«ԷՆԹՐԱՆՍԻԹԱՆ» Է
ՏՓՂԻՍԷՆ տեղեկագիրները կրնան թէ
Թաթարները գրաւած են բազմա-
թիւ գիւղեր, ուրիշ Ռուսներ վը-
նտուած են ։ Թաթարական զրօշա-
կը կանգնուած է եւ ուսական իշ-
խանութիւնը անհետացած ըլլալ կը
թուի 200 քառակուսի մղոն տարա-
ծութեան մը վրայէն ։

ԲԵՆԵՐՍՊՈՒՐԿ, 16 հոկտ. — Հազար-
ներով պարսկական Գիւրգեր կուգան
միանալու Չանկէզուրի Թաթարնե-
րուն եւ սկսած են քրիստոնեանե-
րը հարստահարել ։ Ոստիկանութիւնը
ձեռնարկեց հայերու գէնընկե-
ցութեան Պազուի մէջ . Թա-
թարները կը պատրաստուին նոր կո-
տորածներու. կայսրը հրաման տուաւ
որ գէնք տակ ունենան Կովկասի
բոլոր գինուորները ։

«ԺՈՒՌՆԱԼ» ԷՆ
ՏՓՂԻՍ, 17 հոկտ. — Չօքավար Թա-
գալիւն իմացուց Պաթարային թէ
տասը հայկական գիւղեր կողոպտուած
են ։ Ղէրասօօի գաւառին մէջ, բը-
նակիչներու կացութիւնը սոսկալի է ։
Խաղաղացուծ թիկապէս անկարելի է ։

ԷՆԹՐԱՆՍԻԹԱՆ ԷՆ
ԲԵՆԵՐՍՊՈՒՐԿ 19 հոկտ. — Չարը,

կըսուի թէ, զօգու է Կովկասէն ըս-
տացուած զէչ լուրերէն ։ Հրամայած
է արագօրէն միջոցներ ձեռք առնել
զսպելու Թաթարները նախ քան ձը-
մեռին հասնիլ որ լեռներու ճամ-
բաները անտնցանելի կընէ բանակի
մը համար ։

«Առմէնի» հոկտեմբերի թիւին մէջ
Տ. Մինաս Չէրազ Կովկասի հայե-
րուն ուղղեալ կարեւոր յօդուած մը
հրատարակած է, որով կը հրաւիրէ
հայերը հրաժարիլ Ռուսիոյ դէմ
քրօնականութեն եւ անոնց բացառու-
թեան հաւատարիմ հպատակներ դառ-
նալ Նիքոլա Բ. Չարին, որ վերջերս
վերադարձուց անարդարօրէն գրաւ-
ուած եկեղեցւոյ եւ դպրոցներու
գոյքերը եւ իրաւունքները, եւ մի-
անալ Ռուսերուն ընդդէմ հասա-
րակաց թշնամւոյն, համընթացական
Թաթարներուն ։ Տ. Չէրազի այս
յօդուածը համակրանք արտայայտ
են Ֆրանսական քանի մը թերթի

ՌՈՒՍՉՈՒԳԻ

ՀՈՒԱՐԱՐՉՈՒԹԵԱՆ ՏԵՂԵԿԱՐԷՆ

Հոգաբարձութիւնս իր հինգերորդ
տարեշրջանը բոլորելով ըստ կար-
գին կուգայ իր համարատուութեան
տեղեկագիրը մատուցանել տեղւոյն
Հայ հասարակութեան ։

Երբ Հոգաբարձութիւնս գործի
գլուխ անցաւ, նիւթական պէս
կրթական վիճակն ալ շատ անկեալ
էր, դրամ կը պակսէր, գրեթէ մէկ
տարի այս վիճակը շարունակեց
կաղն ի կաղ եւ այդ շրջանին մէջ
կարելի եղաւ այն ժամանակի Թաղ.
Խորհրդոյ վճարելու վարժարանին
3000 ֆրանքի մօտ պարտքը՝ որ ա-
ռաջ եկած էր առ ի չցոյլէ կանո-
նաւոր մատակարարութեան Երկրորդ
տարին ժամանակին Թաղ. Խորհուր-
դը տարեկան 3000 ֆր. խոստացաւ
վճարել, որով կարելի եղաւ Ու-
սուցչաց թիւը աւելցնել եւ հետե-
ւաբար վարժարանին նիւթական եւ
կրթական վիճակը փոքր ինչ բար-
ւոքել այս երկրորդ տարին ըս-
կանալ զխաւարաբար խնամք տա-
րուեցաւ Մայրենի լեզուի եւ տղոց
կրթական վիճակին վրայ եւ ասի-
կայ կանոնաւորաբար կը տեւէ մին-
չեւ ցայսօր ։

Բայց ցաւալի է ըսել թէ հա-
կառակ Ուսուցչական Մարմնոյ հըս-
կողութեան եւ Հոգաբարձութեան
ջանքերուն, դարձեալ պատժ. ծնող-
ները թոյլ կերպով կը վարուին
իրենց զաւակաց կրթութեան հան-
դէպ. Հոգաբարձութիւնս՝ որ ամէն
ժամանակ արձանագրութիւնները աշ-
քէ կանցնէ, տեսնուած է թէ ծնողը
ոմանք եւ գրեթէ մեծ մասը ի-
րենց ուղղուած դիտողութեանց ան-
տարբերութեամբ պատասխանած են.
նոյն իով աշակերտին թախանձանաց
վրայ սուտ խօսած են, որով վար-
ժարանին պաշտօնէութիւնը զոճա-
րին կացութեան մը կը մատենէ ։
Տունը վարժարանին լրացուցիչ
մասն է . վարժարանն ալ տան. ինչ
որ կը սորվի վարժարանին մէջ
պէտք է շարունակուի տան մէջ.
Բայց մեր մէջ ընդհակառակն ինչ որ
վարժարանը կուտուցանէ, տղան կը

մոռնայ տան մէջ, որովհետեւ հոն
յաճախ ներկայ կըլլայ այնպիսի
տեսարաններու՝ որոնք տղուն միտ-
քն ու հոգին փոխանակ չինելու
կարեն . (բացառութիւնները յարգե-
լով) . ո՞ր ընտանիքն է որ մօր պէս
կը խօսի իր զաւակներուն հետ, ա-
նոնց վարժարանին մէջ օրական ան-
ցուցած կիսնքին վրայ տեղեկու-
թիւններ կուգէ. ո՞ր ծնողքն է որ
իր զաւակներուն կ'ուսուցանէ Մայ-
րենի լեզուն գէթ, ո՞ր մայրն է որ
իր զաւակացը կրթութեան, դաստի-
արակութեան վրայ խորհած է ։

Ընտանեկան կամ մայրենի դաս-
տիարակութեան մէջ է ազգի մը
յառաջդիմութիւնը, բայց մեր ծնող-
ները մեղի ի՞նչ կուտան . միայն
կեղեւով հայ զաւակներ, զորս կը
գրկին վարժարան եւ ամէն բան
կըստան անկէ . եւ ահա այս
իսկ պատճառաւ մեր վարժարաննե-
րու պաշտօնը դժուարացած է .
պէտք է հսկէ տղուն վրայ վար-
ժարանին մէջ եւ վարժարանէն
դուրս, ինչ որ շատ դժուար է ։

Իոլոր ուսումնները եւ գիտու-
թիւնները՝ որք կ'աւանդուին մեր
վարժարաններուն մէջ, դժուար կը
ներգործեն մանուկին վրայ եթէ
ստացած չեն անոնք պէտք եղած
նախնական կրթութիւնը տան մէջ ։

Այդ, ազնիւ ծնողները ամէնուրեք
վրայ պարտք կը ծանրանայ կարե-
լի եղած չափով օգնել դաստիարա-
րակութեան օղտին . նախ պէտք է
որովեցնել անոնց մայրենի լեզուն,
տալ անոնց հարկ եղած տնական
կրթութիւնը եւ եթէ այդպէս մէկ
կողմանէ դաստիարակը միւս կող-
մանէ ծնողքը ձեռք ձեռքի տան
եւ աշխատին կրթութեան պէտքին
համար, այն ժամանակ թիւերեւ
փոքր ինչ թէ թիւերեւ մեր Պառ-
ժարաններուն գոյքը ։

Կալով վարժարանին նիւթական վի-
ճակին, 5 տարեի ի վեր մեքենայի
պէս կանոնաւոր կը շարժի. ամսա-
կաններ կանոնաւոր կը վճարուին,
գանձումներ ժամանակին կըլլան .
Պատժ. Թաղ. Խորհուրդը իրեն ինկած
բաժինը կը վճարէ . վարժարանը
պատրաստ դրամ ունի, պարտք չու-
նի, ինչ որ հազարագիւտ է ։

Վարժարանը պահեստի գրամ մը
ունէր զոր որոշած էր անձեռնմը-
խելի պահել եւ յատկացնել վար-
ժարանի շինութեան բայց քանի որ
վարժարանը կը շինուի եւ նկատելով
որ մեղի նիւթականէն աւելի մարդ
պէտք է, հետեւաբար 1904-1905 չըր-
ջանի համար Ե. դասարան մը կազ-
մեց եւ այդ գումարէն 1000 լէվէն
աւելի ծախսեց այս նպատակին, ո-
րով այսօր 9 մանչ եւ 2 աղջիկ
չըլնաւարտներ յոռաջ կուգան ո-
րոնք կրնանք ըսել թէ բաւակոնա-
չափ ուսում ամբարած են եւ կըր-
նան յաջողիլ կենաց պայքարին մէջ.
այս կանոնաւորութիւնը կը պա-
տիւնը նաեւ անոր որ 4 տարեի է ի
վեր գրեթէ մեկնոյն ուսուցչական
խումբը պաշտօնի վրայ մնացած է
եւ տղաք մեկնոյն ուղղութեամբ
յառաջացած են ։

ՉԵԿՈՅ

Բացի եղիպտոսէ եւ Ռուսիայէ
արտասահմանի մեր չլճարող բաժա-
նորդներուն թերթերը զաբոցեցած
ենք սեպտեմբեր 30 ին ։ Եւրոպ. պի-
տի ընենք այդ երկու երկիրներու
եւ Պուլկարիոյ մեր կարգ մը չլճա-
րող բաժնորդներուն ալ, եթէ ա-
նոնք մինչեւ ներկայ ամսոյ վերջը
չը հաճին իրենց բաժնեգրները մեղ
հասցնել ։

ԹՈՔԱԽՏԻ ԴԱՐՄԱՆՈՒՄ

Թոքախտի դարմանումին համար երեք կարեւոր բաներ կան : Առաջինը եւ մաքուր օդ, լաւ կերակուր եւ հանգիստ : Դեղերը շատ քիչ կարեւորութիւն ունին, կամ գրեթէ չունին :

Երբ մարմինը թոքախտի մանրէներով վարակուի, անոր պէտք եղած բանը, զգուշաւոր դրութեան կանխարգելումն է : Արեւելի մէջ նոր դորութիւնը գրեւելու է, եւ մաշած հիւսուածքները վերանորոգելու : Ասիական ընկերութեան համար լաւ առատ մեղրամրս պէտք է : Մասնաւոր կերակուր մը չկայ, դու կարելի ըլլայ բացարձակապէս յանձնարարել թոքախտաւորներուն : Առհասարակ ըրողը գիտարմարսելի կերակուրները աղէկ են :

Թոքախտաւորին սաստիկօք լաւ վիճակի մէջ պահուելու է, հակառակ պարագային բուժումը կը դժուարանայ : Հիւանդը զգուշանալու է տապալուած ուտելիքներէ : Բոլոր միտերը խաշուած կամ խորոված ըլլալու են, շատ մը պարագայներու մէջ հում, քերուածք միտք աւելի օգտակար է, երբ եփուած միտերը աւելի դժուարամարտելի կը դառնան : Հաւկիթը աղէկ է ինչ ձեւով ալ անուրի, խաշուած կամ հում : Հումը կարծիք եւ կամ քիչ մը կիրորնի հեղուկի հետ : Եթէ հիւանդը կը սիրէ կրնայ արմարքներ ուտել կաթի հետ :

Թոքախտաւոր մը երբեք պէտք եղածին չսփ կարագ չի կրնար ուտել : Թարմ հացը այնքան աղէկ չէ, զիրարմարտելի չըլլալուն համար : Զօրը աւելի աղէկ է, քան հասարակ ճերմակ հացը : Հետեւեալ բուսականները, չոմին (սպաննախ), ոլոռ եւ բակլա (Փասուլիա), շատ աղէկ են : Բոլոր պտուղները մասնաւորապէս խաղողը, ճնշողաւոր են : Ընկոյզն ալ աղէկ է : Մեղր ու շաքար կրնան ուտուիլ փնփ քանակութեամբ եթէ ստամոքսին չեն վնասեր :

Կերակուրի ժամերը շատ կանոնաւոր ըլլալու են : Ակոտները մաքուր պահուելու են : Հիւանդը իր կերակուրը լաւ ծամելու է եւ կամաց, կամաց : Երբեք ուտելու չէ յոգնած ատենը, ոչ ալ գործի սկիզբունքէն : Երբեք օդը չի փակուի : Երբ օդը ներքէ թոքախտաւորը իր կերակուրը բացօդայ տեղ մը կամ իր պատահական առջեւ ուտելու է : Զուարթ խոսակցութիւնները շատ օգտակար են կերակուրի ատեն, սակայն վիճաբանութիւններ, լրագիր կարգալ եւ այլն, վնասակար են :

Կերակուրին ուղարկութիւն տալէ զատ հիւանդը պէտք չէ որ նեղուի : Եթէ զործը շատ ծանր է, կամ գործարանին օդը ապառոյշ, պէտք է որ փոխէ զանոնք :

Ատեն կայ որ կատարեալ հանգստութիւն հարկաւոր է : Այն թոքախտաւորը որ մասնաւոր ճիգեր կը նէ մղանքով քալելու, կամ մարզանքներ ընելու, որպէս զի զօրանայ,

զոնն է սխալ ուղղուած փափաքի մը կամ վնասակար խրատի մը : Ինչպէս ըսինք՝ գինի, օդի եւ զարեւոյր ամբողջովին ձգուելու են : Ասոնք իրենց գործածութեան ատեն կրնան քիչ մը կորով տալ, սակայն հակազդեցութիւնը շատ վտանգաւոր է : Այս խմելիքները չափաւոր գործածող հիւանդին ալ պիտի տեսնէ որ քիչ մը վերջը կը սկսի հաղալ :

Նիւ Եօրք 804թՕՐ ՄԱՐԹԷՆ «ԱՐԾԻԻ»

ՊԱՏԱՍԻԱՆ ՄԸ ՊԱՐՈՆ ԳԱԼՅԱՅԵԱՆԻՆ

Միշտ զգուշացիր սեճնագով ինքնախաբ մը ըլլալի, եւ քող ու ճշմարտութիւնը խօսի ինքի համար :

Դաս մը մարդիկ կան մեր մէջ, ասոնք են որ յաւակնոտութիւնն ունին ինքզինքնին հանրային կրթիչներ երեւակայելու : Ձեռ գրտեր անոնց իմացական ո՞ր ցայտուն յատկութիւնն է ծնունդ կառնէ իրենց այս տղայական եւ յաճախ հեգնելի մեծամտութիւնը, իրենց անձին եւ կարողութիւններուն նկատմամբ : Ո եւ է անձ որ զուրկ չէ ողջամիտ գաղտնիքներէ, մէկ ակնարկով կարող պիտի ըլլար չափելու անոնց ծանծաղամտութիւնը եւ պիտի ըսէր իրենց թէ ինչ կարծես իրապէս : Սակայն անոնք կը հաւատան՝ հոգեբանական պարզ երեւոյթ մըն է ասիկա՝ եւ անկեղծ է իրենց հաւատքը թէ, իրենք պզտիկ ու արհամարհելի արժանիքի տէր անձեր չեն, երբեք : Կեանքաւոր երգող իրենց յաղթական ընթացքին մէջ քննադատութեան առարկայ կ'ըլլայ իրենց գործունէութիւնը, յանկարծ վայրկեանապէս կը զայրանան ու կը սրտնեղին . . . : Մարդկային ներքին թերութիւն մըն է անշուշտ, եւ պէտք է ազնիւ ըլլալ խոստովանելու որ, մեր հանրային գործիչները մասնաւորապէս կախարդին սիրայօժար, ականջ տալ չոր չոմող, հիացիկ խօսքերու եւ ապուշ բացադանութիւններու, որոնք կու գան պանծացնել իրենց անունն ու անուանալի արժանիքները . . . :

Քննադատ մը որքան ալ անկեղծ ըլլայ, չափաւոր իր արդարացի ներկատողութիւններուն մէջ, անշահախնդիր, հեռու ո եւ է փորձողի ներկատունքի, երբ այդ մարդոցմէն մէկը քննադատելու անազնութիւնը կուենայ, գաղապարտած է անոնցմէ սոփեստ մը, յաւակնոտ մը, եւ յիմար «ցուցամուր» մը նկատուելու : Սակայն ինչո՞ւ պիտի հարցնենք անոնք թերեւս թերհաւատած, պարզ է՝ որովհետեւ անքաղաքավար գտնուած են անոնք գովեստէ եւ չոյող ամականներէ զգուշանալու, ըսելու համար այն՝ ինչ որ տկնիւ երականութիւնն է, ինչ որ խաբարելը ճշմարտութիւնը հիացիկ ու տգէտ երգեծանքի մը վերածել պիտի ըլլար :

Հարկ չկայ հոս՝ մասնաւորօր որ երկար պիտի ըլլար՝ պարզելու Խոսրու ու հիւանդ հոգեբանութիւնը մեր այն հանրային գործիչներուն եւ կրթիչներուն, որոնք առանց այլ եւ այլի, իրենց մասին եղած ո եւ է քննադատութիւնները գովեստ մը չէ՝ կը վերագրեն թագուն շարժաթիւններու, ստոր հաշիւներու, եւ չարագոյն

չահախնդրութեան : Ողջամիտ ու ըրջախոս անձ մը, մասնաւոր իրական արժանիքի տէր անձ մը, համոզուած եմ, երբեք, ասանկ ոչինչ հետեւութիւններու եւ ենթադրութիւններու վրայ հիմնուելով ասպարէզ չիջնար ասպացուցանելու որ, քսցի իրմէ, իր բոլոր քննադատները վարակուած են «մեծամտութեան» եւ «ցուցամուրութեան» անբուժելի ու անօրայի ակառն : Յաճախ կըզգաս որ ակամայ ծիծաղելու կը հարկադրուի այս մարդոց յաւակնոտ ու հիւանդոտ հոգեբանութեան վրայ, որովհետեւ անոնք ամեն ատեն պատասխանատու չեն իրենց սխալներուն :

Համբիթի ներկայացումէն շատ վերջ, երկրորդ ներկայացումի նախաքայլին, պրն . Գալֆանան հարկ կը տեսնէ, յօդուածի մը մէջ, որ իր քննադատներուն ուղղուած է իբր թէ (հոս իր քննադատները յոգնակի չեն սակայն) ինծի բաներ մը ըսելու : Այդ գրութեան յաւակնոտ մեծամտութիւնը ինքզին հասկնալու համար պէտք է կարգադրել ըլլալ զայն : «Աղջիկ, քեզ կ'ըսեմ, հարսնո՛ւկ, դուն լա՛ն», եւ ժողովրդական այս պերճախօս բացատրութիւնը քաջ կը յարմարի այդ յօդուածին ոգեկոծած ծածկոյթը վերցունելու, զայն իր վերաւորումը շահախնդրութեան մէջ մեր աչքին առջեւ դնելու համար : Յօդուածը նպատակ ունի մասնաւորապէս՝ ընթերցողներուն հետ ես ալ համամիտ եմ՝ մասնաւոր ընկեր մեր հանրային կեանքին մէջ արմատացած թգէզ սովորութիւն մը՝ ցուցամուրութիւնը : Յուսմովութիւնը իր այլապէս անկեղծ եւ անհեղինակ մէջ պէտք է առնել սակայն, ինչպէս ըլլայ թեմիս վրայ, ըլլայ լրագրութեան մէջ, եւ վերջապէս, մէկ խօսքով, հանրային եւ քննադատական բոլոր շրջանակներուն մէջ ալ :

Այս առթիւ առաջին՝ մեր լրագրութեան ինկած վիճակը դատարկութեան յետոյ, որովհետեւ պ. Գալֆանանը իրապէս գնահատելու բարձրութեան մէջ չէ կրցած մնալ, կրցէ ինծի՝ պէտք չէ որ քննադատ մը «անձնական եւ կուտակցական կըրքերէ» շարժած ըլլայ եւն : Ամեն բանէ աւելի այս «անձնական եւ կուտակցական կըրքեր» բացատրութիւնը չի կրցի հասկնալ եւ չիմ ալ գիտեր թէ պ. Գալֆանան ինչ պարագաներէ թելադրուած յանկարծ ասանկ մեծագոյն յայտարարութիւն մը կ'ընէ : Երկրորդ ցուցամուր պէտք չէ ըլլալ : Մարդ մը նշանաւոր հեղինակի մը գրածը կարդալով անպատճառ մասնաւոր շնորհք մը չստանար զայն գնահատելու, ինչպէս որ ճիշտ պիտի ըլլար նոյնպէս գիտել թէ՛ նշանաւոր հեղինակի մը գործը ներկայացնելով մեծ արուեստագէտ մը եղած չըլլար : Դուք իմաստակ մըն էք, կը յարէ ան . «Եւ մասնաւոր գեղարուեստագուրի եւ խաւարապատ միջավայրում ապրելով» դաստիարակութիւնն եւ զարգացումէ գուրկ խեղճ ու կրակ մը (111) : Երրորդ՝ Գեղարուեստը հասարակ միտքերու մասն, չեղի բան մը չէ, պէտք է եւրոպական բարձրագոյն կրթարաններու մէջ դասընթացք մը բաւարար եւ ուղեղ փրկող տեղեցած ըլլալ, ծանցած ըլլալ մեծ արուեստագէտներ, եւրոպացի ծրնած ըլլալ (Ֆրանսացիներն ու իտալացիներն նախընտրել են) եւ կամ դերասան . . . : Զարթոյթ եւ վերջին կէտ մը, որ յօդուածին երկայնութեան յարգելի աղերս գրուած է, սա ի-

մաստն ունի՝ Մեծ մարդիկ, արժանիքի եւ կարողութեան տէր, ծափահարուած քննադատ, գիտեն արհաւիրել այն «ցուցամուրները» որոնք յանդգնութիւնը կուենան ուրուսալու իրենց արուեստագէտի բարձր ու ցայտուն առանձնայատկութիւնները : Եթէ պ. Գալֆանան իմ իր Համբիթի ներկայացման առթիւ ըրած քննադատական ոգին լիովին ըմբռնած ըլլար, աղիւ եղած ըլլար նոյն ատեն դատելու որ յաւակնոտութիւնը չեմ ունեցած, երբեք, իմ արժանիքս վեր բան մը երեւանալու եւ բան մը ըսելու՝ եւ նամաստանդ իմ անկեղծութեանս անձնապէս համոզուելու չի քաշուեր, հետեւն իհուս լսուող թմբուկներու ձայնին ականջ տալով, չեմ կարծեր որ, ներկայիս, ինքզինքը ասանկ «մեծամիտ» պիտարանալ մը գրելու ծիծաղելի հարկին մէջ պիտի գտնէր : Զիմարտութիւնը կը սիրմ պ. Գալֆանան, կը աշտու գեղարուեստը, կը խոնարհիմ արուեստագէտներու տիրական համբաւին, ինչպէս նաեւ գիտեմ յարգել անոնց համեստ ու աղիւ արժանիքները, բայց կարեւորութիւնն չեմ տար ու չեմ ալ արտօժիր զբարանութիւններէ, հետեւաբար կանգ կ'առնեմ հոս : Վերջին խօսք :

Ներքեզ ինծի ըսել որ դուք ձեր յօդուածի վերջաւորութեան կը հակասէք ձեր գնահատուած արուեստագէտ մը ըլլալու արժանիքին երբ փոխանակ ձեր բանի տեղ չի դրած քննադատներուն հանդէպ մէկուսի արհաւիրանք մը պահելու՝ ինչպէս որ կրցէք թէ կրնան մեծ արուեստագէտներ՝ հրապարակ կ'իջնաք. իբր թէ արուեստն ու գեղարուեստն հասկցողը դուք ըլլայիք միայն, ու ձաղկումներ ընելու կը յաւակնիք : Ընդունեցէք որ արուեստը իր անհակատարելութեան մէջ իսկ տակաւն պէտք ունի կատարելագործուելու, եւ եթէ անկեղծօրէն կը քաղձաք յաջողի, ինչ որ կը խորհիմ թէ ձեր ձգտումն ըլլալու է, անհնէն աւելի դուք եղէք ձեր թերութիւններուն խիստ քննադատ : Համոզուեցէք որ ձեր ներկայացուցած արուեստը գուրկ չէ շատ մը ակնհեւութիւններ, եւ թէ զայն քննադատելու համար անպատճառ հարկ չկայ մասնագէտ մը ըլլալու, եւ երբ օր մը հետզհետէ կատարելագործուելով բարձր արուեստագէտի մը տիրական առտիճանին հասնիք, այն ատեն իսկ տակաւն վերապահ եղէք ձեր արհամարհանքներուն մէջ . . . : Իրականութեան մէջ արուեստագէտն է որ արուեստը կը կատարելագործէ, կը բարձրացնէ ու հանրութիւնը կրթելու միջոց կընէ զայն, այլ ոչ թէ արուեստն է որ կը բարձրացնէ արուեստագէտը եւ զայն կրթիչ մը ըլլալու գերին կը հասցնէ :

ՎԱՐՈՐԾ

Լ Ս Ա Ր Ա Ն

Վառնայի երկսեռ հայ հասարակութիւնը կը հրաւիրուի ներկայ գրտնուիլ յարանական 4 ղդ. Ժողովին, որ պիտի գումարուի յառաջիկայ Երկուշաբթի, 24 հոկտ. 1905, ժամը 8/2 ին երեկոյան դպրոցի սրահին մէջ :

Պիտի առեւտրական քանի մը Երիտասարդներ . Նիւթ ունենալով «Հայ մարդական խումբի մը կարեւորութիւնը եւ կազմութիւնը» :

Վարչ. Հայկ. Ընթերցարանի (Կնիք)

ՀԱՎԱՏԻՍԱԹ

ԹԻԻՐՔԻԱ

Սթանպոլտան Էնտեք. Ռոսմե-
ն ին մուխպիրի մասսուսը հոկտ-
17 թարիխի և թիտեքի թեկեկը-
րաթը վերմիշ տիր .

« Հապս օլընան էրմէնիլէրտէն
պիր չոգ քիլիլէր տէհէթլի
սուրէթտէ խըրքալանմը տըր-
լար . իճրա օ օլընան իսքէնճէ
ալամէթի էօլիլէր իսկէրինտէ
կէօրինիօր, պիր դաշընըն բար-
մազլարընտան թըրնադլարը
չըգարմը տըրլար . Բէզա պիր
էօլիլէն սուրէթինտէքի ալէ-
մէթլէրի կէօթէրմէմէք իչիւն
Էրիլիւնի գարալը թութարլար
ըտը . Պատրիարքարանըն տէր-
տէսթ օլընան պիր մէմուրը օլ
տէրէճէ մէրհամէթսիզ սուրէթ-
տէ իսքէնճէ ալթընա ալմըլլար
քի՝ մահպուստան չըգարտըգլարը
կիւն էօլտիւ . Եէնի տէրտէսթ օ-
լընան իքի էրմէնիլէր քէնտի
մահպուստանէլէրինտէ թէլէթի
նէֆս իթտիլէր, պիրի տամարլա-
րընը քէսմիշ վէ տիկէրի ասըլ-
մը տըր . »

— Մաքէթնիա գօնթրօլը մէ-
սէլէսինտէն տօլայը ալթը էլիւ-
լէրին Սուլթանըն հուզուրընա
գապուլ օլունմամալարը վէ պու-
պապտէ էլիլէրին քէնտի հիւ-
քիւմէթլէրինտէն թալիմաթ
իսթէտիքլէրինի եազմը ըտըգ .
մէսմուլթա կէօրէ, Սլմանիա վէ
Բուսիա թիւրք հիւքիւմէթինէ
գարըն ճէպր իսթիմալ իթմէք
իսթէմէմիլէր . ֆազաթ տիկէր-
լէրի թիւրքիանըն Ասիա գըլթա-
սընտաքի իսքէլէրինտէ հարպ
վարօրլարը իլէ նիւմայիշ իթմէք
իչիւն հէմէքքեար ըմըլլար .
պիր թէլէկրաֆա պինտէն ին-
կիլիզ էլիլիսի պիր իսթիմաթա-
լէ՝ 48 սաաթտա էկէր տէվլէթ-
լէրին թէքլիթի Սուլթան գա-
պուլ իթմէք իսէ Սթանպոլտան
չէքիլէճէկինի իսթար իթմիշ .

Տէվլէթլէրին Էալընը Ասիա
իսքէլէրինտէ նիւմայիշ իթ-
մէլէրի՝ Մաքէթնիա գօնթրօլ-
լարընա ճէսարէթ վէրմիշ օլմա-
մազ իչիւն օլաճադ տըր . Նիւ-
մայիշ իսէն վարօրլարտան հիշ
պիրի թիւրքիանըն էվրօրա գը-
թասընտաքի իսթմանլարընա կի-
տէմէլէճէքլէր .

— Աւստրօ—Հունգարիա էլիլիսի
Մ . Գալիչ Արնալուտլըըն ըն-
քօտրա վէ ճիլար գաղալարըն-
տա գէրգէլէտէն միւթէգարուր
օլան էհալիտէն ասքէր ալըն
մամասընը Պապը Ալիտէն ըհճա
իթմիշ տիր .

ՐՈՒՍԻԱ

Պուստան էվլէլքի նուսիւէմիզտէ
Էաղըլտըըն իւզրէ, Չարըն Էէնի

մանիֆէսթի իշպու նօմէրօմըըն
իւք սահիֆէսինտէ տէրճ օլընտը .
Մէքքիւր մանիֆէսթին ահք-
Էադընճա՝ շիմտի Բուսիա տիկէր
էվրօրա տէվլէթլէրի կիպի Գա-
նունը էսասի իլէ իտարէի օլը-
նան (սահմանադրական) պիր
տէվլէթ օլտու . Պուստան պէօլլէ
էհալիլին հէր սընըֆլարըն ,
միլլէթ վէ մէզհէպ թէֆրիդ օ-
լընմագսըըն , Տումայա (Երես-
փոխանական ժողով) մէպուս ին-
թիլապ իթմէկէ վէ ինթիլապ
օլընմայա հազլարը վար տըր .

Քէզա Տումանըն իլլի վէ ըհ-
յի ալընմագսըըն հիշ պիր զա-
կօն (նիլզամ) իճրա օլընմայա-
ճադ տըր . Եանի դանուն գօյ-
մադ վէ գանուն լաղլ իթմէք
հազգը Չարտան ալընուպ, էհա-
լիլէ վէրիլմիշ տէմէք տիր .
Եալընը Չար Տումանըն գապուլ
իտէճէկի գանունլարը թաստիդ
վէ իճրաճըն հիւքիւմէթէ է-
մըր իտէճէք տիր . մէպուսլար
տալի հիւքիւմէթին իճրաթըն-
նա նէզարէթ իտէճէքլէր . Նիւ-
քէթլէր թէլէքիլի, միթիլիլէր ,
վէ մաթպուսաթ (մամուլ) սէրպէսթ
օլաճազլար .

Չարըն իշպու մանիֆէսթի պիւ-
թիւն Բուսիա տա մէսէրէթ հու-
սուլա կէթիլմիշ տիր . Թա-
թիլի մէշղուլիլէթ իտէն իշ-
ճիլէր վէ չըմէնտըֆէր, թէլէ-
կրաֆ վէ թրանվայ մէմուրլարը
տէրհալ խօշնուտիլէթլէ իշէ
պաշլամըլլար տըր . հէր թա-
րաֆտա չաղու մէսրուրիլէթ հիւ-
քըմ իթմէքտէ օլտըընը թէլէկ-
րաֆլար պիլտիլիօրլար .

Եալընը սօսիալիսթ ֆըրգասը
էլտէ իտիլէն պու սէմէրէտէն
թէմամի իլէ մէմուսն օլմատըընը
իլան իթմիշ իտէտէ, տիկէր հէր
պիր սընըֆ վէ ֆըրգալարըն
էքսէրիլէթի իչիլտէ սօսիալիսթ-
լէրին վէլլէլէսի էհէմմիլէթ-
սիդ գալաճադ տըր .

Փաղաթ պու ճիւմէ իլէ պէ-
րապէր, սօսիալիսթ նիգեապը
ալթընտա իսթիլալընըըն քէն-
տիլէրինէ սանաաթ առտ իտէն
պաղը ֆէստաճըլար էհալիլին
ճէհալէթինտէն վէ Չարըն վատ
իթտիլի միւսատէլէրտէն իսթի-
ֆատէ էլլէմէքլէ, պաղը մահէլ-
լէրտէ դարընըլըլար վէ ույ-
կունսըլ նիւմայիլէր իթմէքտէ
օլտըլարըն իչիլն ասքէր ալթէլ-
լէ օ՝ կիպիլէրի թէտալիլ իթմէ-
կէ մէպուր օլմուշ վէ պաղը
քիլիլէր էօլմիւշ վէ Էարէլէն-
միշ տիրլէր .

— Օտեստան Լօնտօնա վէրի-
լէն պիր թէլէկրաֆ իւզրէ Սամ-
սօն սուլարընա կիթմիշ օլան
Գարա տէնիզ րուս տօնանմասըն-
տա պուլընան ասքէրլէր, Էէնի
մանիֆէսթին նէշրինտէն էվլէլ,
իսթիլալ գալտըրադ Բիրի-
լէվ վէ Չուլնին նամամիլալա-
րընը էօլտիլըմիլլէր, վէ սօնրա

լսեան սանճաղը աչարադ՝ Սէ-
վաստաբօլա կիթմիլլէր . Իշպու
հալատիս թաստիդէ միւհթաճ
տըր .

ՍՕՆ ՀԱՎԱՏԻՍԱԹ

Սթանպոլտան հոկտ. 20 թա-
րիլի վէրիլէն թէլէկրաֆլար
ալթիլէքի հալատիսաթը վէր-
մէքտէ տիրլէր .

Խարիճտէն կէլէն օսմանը
թապաալը օլան Էօլմըլար՝ նի-
ղամը բաշարթթլարը օլտըլը
հալտէ տալի 4 տէն 15 կիւնէ
գատար թէվլէթ օլընըլօրլար
վէ սօնրա Ասիայա կէօնտէրիլի-
օրլար . Պիր աղ չիւհէլլի օլան-
լար Էէք չոգ ըհնէթիտէլէրէ տիւ-
չար օլիլօրլար .

Էճնէպի թապալլարընտալի
բաշարթթլարընտա ուֆադ պիր
գուսուր պուլընմասընտա էնվայի
միւշքիւլաթա տիւչար վէ մէն-
սուպ օլտըլը տէվլէթ էլիլէրի-
նին թէվալիլէրինէ վէ քէֆա-
լէթինէ միւհթաճ օլիլօրլար .
Սօֆիատան Սթանպոլ պուլկար
մասլահաթիլլալարընա կէօնտէ-
րիլմիշ օլան պիր տօքթօր, էլիւն-
տէ բաշարթթլը վէ Սօֆիա թիւրք
գօմիսէրինտէն թալսիլէնտալի
օլտըլը հալտէ, տէրտէսթ վէ
թէվլէթ օլընմը տըր . Գաշ
կիւնտէն պէրու Մ . Նաչէվիլին
անը գուրթարմադ իչիւն չալըշ-
մալարը էլան սէմէրէսիդ գալ-
մագտա տըրլար .

Թիւրք հիւքիւմէթի ըհմի
զալթլարա գարըն պու տէրէճէ
ուլիլունսըլ տալթանտըըն հալտէ,
Պուլկարիա հիւքիւմէթի Սթան-
պոլտան չու սըրա կէլէն 500
գատար իմամլարը վէ հօճալարը
պիլա իթիլադ գապուլ իթմէք-
տէ վէ անլէրին բանիսլամիդմ
վաղլէրինէ վէ թէլիլալթընա
կէօղ գալալադտա տըր .

— Պապը Ալի տէվլէթլէրին իճ-
րաի նիւմայիշ իտէճէկինտէն տօ-
լայը գօրգու կէօսթէրմէյօր,
կէօնա էհէմմիլէթ վէրմէք իս-
թմէյօր . Մաքէթնիա գօնթր-
օլը մէսէլէսինտէն տօլայը սէր
գօմիլէր Հիլմի բաշանըն իսթի-
ֆասընը Պապը Ալի գապուլ իթ-
մէտի . վէ պու թէտալիլէր գօնթ-
րօլը գապուլ իթմէլէճէկինի պիր
տահա տէվլէթլէրէ անլաթմագ
իսթէտի .

— Ալմանիա էլիլիսի Մաքէ-
թնիա գօնթրօլընը գապուլ
իթտիլմէք իչիւն Էէնիտէն Պա-
պը Ալիլէ միւրաճաաթ իթտի .
Իշպու մէսէլէտէն տօլայը Պա-
պը Ալի տէվլէթլէրէ իսթալ
պիր նօթա հաղըլլամագտա օ-
լուպ, անընլէ՝ պիր թաղըմ
մէպտէլէրէ պինտէն՝ գօնթրօլ
իչիլտէն տօլայը Սուլթանըն էլ-
լիլէրի հուզուրընա գապուլ իթ-
մէտիլիլի հաղը կէօսթէրմէք
իսթէր իմիշ .

ՎԻՃԱԿԱՀԱՆՈՒԹԻՒՆ

Վառնայի Աղլ . Երկսեռ Վար-
ժարանայ ի նպաստ ծախուած
տոմսերու վիճակահանութիւնը
տեղի պիտի ունենայ վաղը աղգ-
վարժարանին մէջ, եկեղեցւոյ ա-
ւարտումէն անմիջապէս յետոյ .
600 տոմսակներէ 120 ը պիտի
շահին այլ և այլ ձեռագործներ
աշակերտուհիներէ պատրաստու-
ած .

ԹԱՏՐՈՆ

ՍՐԱՀ «ՍԱԷՏԻՆԷՆԻԷ»

25 հոկտ. 1905, Երեքշաբթի գիշեր,
ճիշդ ևւ ճիշդ ժամը 9-եւ կէսին .

Ծանօթ Ողբերգութիւն—Արուստագէտ Պ .
Կ . Գալֆայիանը, Մասնակցութեամբ
Տիկին Պ . Պասուլաճեանի ևւ Պ . Տ .
Գալմէճեանի պիտի ներկայացնէ

Ի ՆՊԱՍՏ

ԱԶԳ . ԵՐԿՍԵՌ . ՎԱՐԺԱՐԱՆԱՑ

ՕԹԷԼԼՕՅԻ

Նշանաւոր 4 տեսարանները, հեղինա-
կութիւն Շէքսպիրի

Պուլկարիոյ ծանօթ Լօշէր ընտանի-
քի Օրփէսիլըն պիտի նուագէ ընտիր
կոորներ .

ԹԵՅ ԹԵՅ ԹԵՅ

Ընտիր ևւ հոտաւէտ զուտ չինա-
կան թէլ գօրծածել ուզող փափ-
կաճալակ յաճախորդներ թող գիմն
Տ . Հրանտ Երկանեանի խանութը,
Բրեսլաւսքա փողոց թիւ 24, Հայ-
կական Ընթերցարանին կից, հաս պի-
տի գտնեն նաեւ ընտիր գուլպաներ
ֆօթէլաւներ ևւ այլն

ԱԼԵԱ ՊԱՍՏԸՐՄԱ

Գայիսէրի թէրթիլիտէ ալէա վէ
լէզիզ պուստըրմա Էլմէյէ տրոգլէշ
պուլընան զաթլար՝ Մուսալլատա Սան-
տալանըն ճամճը վէ պօյաճը միւլա-
զասընա գարըն Էէնի ալմըլ օլտուղմ
տիւքեանա միւրաճաաթ իթմէլի տիր-
լէր . Բիլսօր 8—12 զրուշա գատար
սաթմագտայըլ .

Պասըրմանը ՅԱՆՈՐ ԲԱՐՍԵՂԵԱՆ
գալիսիլի

ԹԵՄԻՉ ԶԵՄԵՆ

ՎԵ ՍԱԻՄԱԳ

Գայիսէրիտէն չըգան բաստըրմա
լէզիլինտէ բաստըրմա Էաթմազ իսթէ-
լէնլէրէ իլան օլունուր քի՝ Պաթա-
ճըլար չարսուսընտա նօմէրօ 73 Յ . վէ
Կ . Թիմուրճեան պիրատէրլէր տիւ-
քեանընտա պու սէնէլին նաթիւրէլ
Գայիսէրի չէմէնի վէ սուլմագ սաթըլ-
մագտա տըր .

Խարիճտէն սըրարիլէր սէրիան իճ-
րա օլունուր .

Одговорено А. Курбетяна
печатница А. Тодоровъ и С-не—Варна